

Պարենային անվտանգության հարցերի քննարկում Վայոց ձորի մարզպետարանում

31.05.2014



Մ/թ մայիսի 30-ին Վայոց ձորի մարզպետարանում պարենային անվտանգության հարցերով մարզային աշխատանքային խմբի հանդիպման ընթացքում կազմակերպվեց պարենային անվտանգության հարցերի քննարկում: Հանդիպման բացման խոսքով հանդես եկան ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը և Պարենային անվտանգության ծրագրի ղեկավար Վաղիմ ՈՒզունյանը: Պարենային անվտանգության բարելավման ծրագիրը ներկայացրեց ծրագրի համակարգող Ալեքսեյ Պետրոսյանը, իսկ Հայաստանում պարենային անվտանգության վիճակը ներկայացրեց փորձագետ Անաստաս Աղազարյանը: Տեղի ունեցավ բաց քննարկում և կարծիքների փոխանակում: Հանդիպմանը մասնակցում էր նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Արամ Գրիգորյանը: